1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայ-թուրքական պատերազմում հայկական բանակի ծանր պարտություններից հետո Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակի ուղեկցությամբ մտավ Իջևան, որտեղ հայտարարեց դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին[1]: Հայհեղկոմը խոստանում էր Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը և կառուցել նոր կյանք:

1920 թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեգրանի և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցումը Դաշնակցությունից բոլշևիկներին: Սահմանվում էին իշխանության փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետևյալներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստ և 2 ձախ-դաշնակցական, Դաշնակցություն և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին ենթարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, Խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր Խորհրդային Հայաստանի անկախությունը[2]:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունն ակտիվ պայքար սկսեց, այսպես կոչված, ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության անդամներ: Ավելի ուշ ձերբակալվեցին հայկական բանակի 1.000-ից ավելի սպաներ, որոնց ոտքով քշեցին Ալավերդի՝ ճանապարհին նրանցից ոմանց սպանելով, բոլորին ծաղր ու ծանակի ենթարկե-

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ. 2:*

[2] *Ա. Խ ա տ ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը.– «Հայրենիք» (Բոստոն), 1926, հոկտեմբեր, էջ 101–102:*

լով: Ապա ձերբակալվածներին ուղարկեցին Բաքվի և Ռուսաստանի բանտեր: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը:

Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921 թ. փետրվարին ապստամբություն սկսվեց բոլշևիկյան իշխանությունների դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Բոլշևիկները և կարմիր զորամասերը հեռացան Ղամարլու (Արտաշատ): Երևանի գրավումից անմիջապես հետո անկախ Հայաստանի վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե», որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները[3]: Հայաստանի որոշ հատվածում վերականգնվեց անկախությունը՝ որը տևեց ընդամենը մեկուկես ամիս:

Բոլշևիկները Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին մտան Երևան: Մայրաքաղաքը ավերածությունից փրկելու և ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: «Հայրենիքի փրկության կոմիտեն», զորքը և մեծ թվով բնակիչներ Բաշ–Գառնի–Դարալագյազ գծով բռնեցին դեպի Զանգեզուր տանող ճանապարհը, այնտեղից էլ անցան Պարսկաստան:

1921 թ. փետրվարյան ապստամբությունը բազմակողմանի քննության ենթարկվեց տարագրության մեջ հաստատված ապստամբության ղեկավարների կողմից: Այս տեսակետից հետաքրքիր են Ս. Վրացյանի մոտեցումներն ու մեկնաբանությունները:

Փետրվարյան ապստամբության պատճառների մասին խոսելիս անհրաժեշտ է նախ անդրադառնալ Հայաստանի խորհրդայնացմանը: Ս. Վրացյանը նշում է, որ ժողովուրդը լուրջ դրական ակնկալիքներ ուներ խորհրդային իշխանությունից: «Հոռետես թե լավատես սպասում էին, որ 1. վերջ կգտնե երկրում պատերազմի առաջ բերած քայքայումը, 2. վերջ կգտնե պատերազմը, և թուրքը կհեռանա Հայաստանի սահմաններից, 3. Խորհրդային Ռուսաստանի միջամտությամբ բարեկամական հարաբերությունները կհաստատվին Հայաստանի և Թուրքիայի միջև. Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ, այս կամ այն ձևով կլուծվի և թրքահայկական հարցը, 4. կվերականգնվի երկրի ներքին անդորրությունը, և ժողովուրդը նորից հնարավորություն կստանա լծվելու խաղաղ ու շինարար աշխատանքի: Բոլշևիկները իրենց հեր-

[3] *ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5, 5 շրջ.:*

թին պաշտոնական թե անպաշտոն շռայլ խոստումներով ուժեղացնում էին այս տրամադրությունները»[4],– գրում է նա:

Փաստորեն, իշխանությունը բոլշևիկներին հանձնելիս, դաշնակցական ղեկավարներն ակնկալում էին երկրի առջև ծառացած բազմաթիվ խնդիրների լուծում կամ թեթևացում: Ժողովուրդը հույս ուներ, որ նոր իշխանությունները կկարողանան կարգավորել երկրի քայքայված տնտեսությունը, հարաբերությունները հարևանների հետ, ինչպես նաև պայմաններ ստեղծել խաղաղ և ստեղծագործ կյանքով ապրելու համար: Սակայն ժողովրդի հույսերը չարդարացան:

Փետրվարյան ապստամբության պատճառների թվում կարևոր էին խորհրդային իշխանությունների իրականացրած անհարկի ձերբակալություններն ու բռնությունները: Իսկ այդ հարցում հիմնական դերակատարը Չեկան (Արտակարգ հանձնաժողով) էր: «1920 թ. դեկտեմբերի 6-ին կազմվեց և անմիջապես գործի անցավ Չեկան, ու սկսվեցին ձերբակալությունները»[5],– գրում է Ս. Վրացյանը: Ըստ նրա՝ Չեկայի համար ստեղծվեցին բոլոր պայմանները, «նրան հատկացվեցին Ռոստոմի և Կարճիկյան փողոցի անկյունում երկու խոշոր շինություններ: Չեկայի նախագահության համար բռնագրավվեց Խորհրդարանի փոխնախագահ Ավ. Սահակյանի բնակարանը»[6]: Կարելի է եզրակացնել, որ բոլշևիկյան իշխանությունների համար ձերբակալությունները եղել են իրենց հիմնական նպատակներից մեկը: Ժողովրդի համար ստեղծված ծանր իրավիճակում արտակարգ հանձնաժողովները անհարկի ձերբակալություններով ու գործադրած բռնություններով ավելի էին սրում կացությունը:

Վրացյանի վկայությամբ՝ հասարակության վրա առավել ճնշող տպավորություն թողեց Վրաստան անցնելու նպատակով Երևանից հեռացած կուսակցական և պետական ղեկավար գործիչների ձերբակալությունը (Հ. Օհանջանյան, բժ. Հ. Տեր-Դավթյան, Արտ. Չիլինգարյան, Կոր. Ղազարյան, Վ. Նավասարդյան, Վ. Բաբայան, Ա. Աստվածատրյան, բշ. Յ. Մելիքյան, Գ. Վարշամյան և ուրիշներ)[7]: Առավել նվաստացուցիչ էր ձերբակալվածների մի մասին բեռնատար մեքենաներով, իսկ մյուս մասին ոտքով Երևան բերելը: Ս. Վրացյանը գրում է, որ առաջին իսկ օրերից Չեկայում խոսում էին գնդակահարությունների անհրաժեշտության մասին: Նույնիսկ հնչեցվել են գնդակահարության ենթա-

---

[4] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 542:*

[5] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Ինչու և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը.– «Հայրենիք», 1940, փետրվար, էջ 73:*

[6] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 69:*

[7] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, հ. Զ, Բեյրութ, 1967, էջ 216:*

կա թեկնածուների անուններ. Ռուբեն Դարբինյան, Սերգեյ Մելիք-Յոլչյան, Համազասպ (Սրվանձտյան), Բախշի Իշխանյան և ուրիշներ[8]:

Այսպիսով՝ Ս. Վրացյանն առանձնացնում է բոլշևիկյան իշխանությունների գործադրած բռնությունների ու ձերբակալությունների քաղաքականությունը ժողովրդական ըմբոստության հասունացման գործում: Բռնությունների հիմնական ալիքն ուղղված էր Դաշնակցության դեմ: Պատահական չէր, որ Ս. Վրացյանը հիշատակում է բոլշևիկների գործողությունների «Ֆիզիկական մահ Դաշնակցության» կարգախոսը[9]:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ Ս. Վրացյանն առանձնահատուկ տեղ է հատկացնում նաև բոլշևիկների կողմից իրականացված բռնագրավումների քաղաքականությանը: Նախ՝ Վրացյանն անդրադառնում է այն խնդրին, որ բոլշևիկների կողմից խոստացված տնտեսական օգնությունը Ռուսաստանից չեկավ"[10], և իրենց կարիքները հոգալու համար բոլշևիկները սկսեցին բռնագրավել բնակչության ունեցվածքը: Իրոք, բոլշևիկները իշխանության գալիս խոստացել էին, որ Ռուսաստանի օգնությամբ պետք է վերականգնվեր Հայաստանի տնտեսությունը: Սակայն հետո պարզ դարձավ, որ այդ օգնությունը գոնե որոշ ժամանակով չէր լինելու: Ավելին, Հայաստանի նոր ղեկավարությունը իր կարիքները հոգալու համար սկսեց կեղեքել առանց այդ էլ ընչազուրկ բնակչությանը:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները տարբեր պատրվակներով բռնագրավում էին ժողովրդի ունեցվածքը: Խորհրդային բանակին օգնելու անվան տակ գյուղացիներից և քաղաքային բնակչությունից թալանում էին ամեն ինչ՝ «սպիտակ ալյուր, խտացված կաթ, կակաո, շաքար, կոշիկի կաշի, հագուստեղեն և այլն»[11]: «Բռնագրավումը թալանի պաշտոնական անունն էր»[12],– այսպես է բնորոշում Վրացյանը բոլշևիկների իրականացրած քաղաքականությունը: Գնալով բռնագրավումներն ավելի անհեթեթ են դառնում: Վրացյանի նկարագրմամբ՝

---

[8] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք» , 1923, նոյեմբեր, էջ 63–73, դեկտեմբեր, էջ 70:*

[9] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետությունը.– «Հայրենիք», 1922, դեկտեմբեր, էջ 53: (Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետությունը» վերնագրված այս գրությունը, որը հրատարակվել է «Հայրենիք» ամսագրի 1922 թ. նոյեմբերի, դեկտեմբերի, 1923 թ. հունվարի համարներում, ՀՅԴ Ամերիկայի շրջանի 29-րդ Պատգամավորական ժողովին ներկայացված զեկույց է: 1920-ականների վերջերին և 1930-ականներին «Հայրենիք»-ի համարներում հրատարակվում է Ս. Վրացյանի նույն՝ «Հայաստանի Հանրապետությունը» վերնագրով մեծածավալ հուշագրություն-ուսումնասիրությունը):*

[10] *Նույն տեղում:*

[11] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, Բոստոն, 1941, էջ 204:*

[12] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, հ. Զ, էջ 244:*

հեղկոմները գյուղերից պահանջում էին ոչ միայն ոչխար, կով ու հավ, այլև յուղ, պանիր և ձու: Սևանա լճի ավազանի գյուղերում պարտավոր էին ձուկ մատակարարել բոլշևիկներին: Անիմաստ էր որսի կենդանիներ պահանջելը: Օրինակ՝ Ջրվեժ գյուղի վրա կաքավի տուրք էր տրվել[13]: Իսկ որոշ դեպքերում էլ խուզարկված տներից տանում էին ոչ միայն կենդանիներ և պարեն, «այլև դրամ, ոսկեղեն ու գոհարեղեն, գորգեր, մետաքսի և այլ թանկարժեք կտորներ, շաքար, սապոն, զանազան հագուստ»[14]:

Վրացյանը գրում է, որ բռնագրավումների մեջ «ամենավարպետ ծրագրված ու կազմակերպված գործերից մեկն էլ, անշուշտ, եղավ «Պարենի շաբաթը» կամ, ինչպես Երևանցիք ավելի ճիշտ բնորոշել էին, «Թալշաբաթը» (թալանի շաբաթը), հունվար ամսի վերջերին»[15]: Ոգևորված «թալշաբաթ»-ի «հաջողություններից»՝ բոլշևիկները ծրագրում էին այլ «շաբաթներ» ևս իրականացնել, օրինակ՝ «սպիտակեղենի շաբաթ»: Վրացյանը հեգնանքով մատնանշում է, որ այս կերպ «Երևանը թոթափում էր իր վրայից բուրժուական նախապաշարումները և ամուր կերպով ոտք կոխում «կոմունիստական շինարարության» ճանապարհի վրա: Առաջավոր Ասիայի շեմքին, հայ «պրոլետարիատը» կատարում էր իր պատմական առաքելությունը»[16]: Մինչդեռ ժողովուրդը Ռուսաստանից էր օգնություն սպասում, սակայն իրենից վերջին պատառը խլելով՝ ուղարկում էին Ռուսաստան[17]:

Բռնագրավումների խնդրին անդրադառնալիս Ս. Վրացյանը հիշատակում է նաև բոլշևիկ պատմաբան Բագրատ Բորյանի աշխատությունը և, հղելով նրան, եզրակացնում, որ բոլշևիկ պատմաբաններն անգամ քննադատում էին այդ քաղաքականությունը[18]: Բ. Բորյանը խորհրդային այն եզակի պատմաբաններից էր, որ, դեռ ապստամբությունից մեկ տասնամյակ չանցած, համարձակություն էր ցուցաբերել վեր հանելու ապստամբության իրական պատճառները, որոնց մեջ ընդգծվում էին նաև բռնագրավումները: «Առանց կազմակերպված և կարգապահ վարչամեքենայի, առանց քարոզչական նախապատրաստական աշխատանքի և առանց հաշվի առնելու երկրի յուրահատուկ պայմանները Հեղկոմը կարգախոս է հրապարակ նետում. բռնագրավել և գրավել քաղաքների մասնավոր անձանց պարենն ու գյուղացիության

---

[13] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1924, մարտ, էջ 113:*

[14] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1924, հունվար, էջ 86:*

[15] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1924, մարտ, էջ 111:*

[16] *Նույն տեղում, էջ 113:*

[17] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 544:*

[18] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, էջ 206:*

հացի պաշարը»[19],– գրում է Բ. Բորյանը: Փաստորեն, Ս. Վրացյանը բոլշևիկների բռնագրավումների քաղաքականության հակաժողովրդական բնույթը փաստում է նաև խորհրդային պատմաբանի եզրակացություններով:

Վրացյանը նշում է նաև, որ շատ տեղերում բռնագրավումների պատճառով տեղի էին ունենում «տարերային ըմբոստություններ□, որոնք ճնշվում էին Երևանից ուղարկված պատժիչ զորամասերի կողմից[20]:

Կարծում ենք, նախընթաց պատերազմի, սովի, համաճարակների պատճառով տնտեսապես քայքայված Հայաստանի բնակչության հանդեպ բոլշևիկյան իշխանությունների կողմից կիրառվող բռնագրավումների քաղաքականությունը լիովին անիմաստ էր: Խորհրդային Ռուսաստանում փորձարկված և արդեն ձախողված «ռազմական կոմունիզմի» քաղաքականության դառը պտուղները քաղել էին տեղի իշխանություններն ու ժողովուրդը: Եվ ինքնին անմտություն էր նույն քաղաքականության կիրառումը Հայաստանում:

Փետրվարյան համաժողովրդական ըմբոստության հասունացման վրա մեծապես ազդեց բոլշևիկյան իշխանությունների անմարդկային վերաբերմունքը դեպի հայկական բանակն ու հայ սպայությունը: Հայ կոմունիստները Ռուսաստանի հրահրմամբ բառացիորեն ոչնչացրին հայ զինվորականությանը: Վրացյանն անդրադառնում է այդ «անարդարություններին»: Հայկական բանակի գլխատման հիմնական մեղսակիցներ է համարում Հայհեղկոմի անդամներ Գ. Աթաբեգյանին և Ավիսին (Նուրիջանյան)[21]: Նա գրում է, որ այս տմարդի արարքը ևս անհետևանք չմնաց: Առավել ծանրացավ սպաների ընտանիքների վիճակը[22]: Կարծում ենք, որ հայկական բանակի և հայ սպայության քայքայումն ու ոչնչացումը բոլշևիկյան իշխանությունների գործած մեծագույն սխալներից էր: Նախընթաց ժամանակաշրջանում հայ ժողովրդին սեփական հողի վրա վերջնական բնաջնջումից փրկել էր հայ զինվորականությունը: Իսկ վերջինիս հանդեպ նոր իշխանությունների որդեգրած հալածական քաղաքականությունն աններելի էր ժողովրդի համար: Հատկապես անհրաժեշտ էր հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ երկիրը դեռ պատերազմական դրության մեջ էր, և ցանկացած պահի հնարավոր էր թշնամու ներխուժումը մեր պետության տարածք:

Փետրվարյան ապստամբության պատճառների շարքին դասվում է նաև ազատ խոսքի, մամուլի սահմանափակումը բոլշևիկյան իշխա-

---

[19] Б. Б о р ь я н. Армения, международная дипломатия и СССР, ч. II. М.–Л., 1929, с. 126.

[20] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1924, մարտ, էջ 114:*

[21] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1924, հունվար, էջ 87:*

[22] *Նույն տեղում, էջ 90:*

նությունների կողմից: Այս առումով Ս. Վրացյանը գրում է, որ «Հայաստանի ամբողջ տարածության վրա բոլորովին մեռավ ազատ միտքն ու հասարակական կյանքը»[23]: Նա խոսում է նաև մամուլի սահմանափակումների մասին. «Մամուլը ներկայացված էր «Կոմունիստ», «Աղքատ գյուղացի» ու «Կարմիր բանվոր» անբովանդակ ու ողորմելի հայհոյաթերթերով, որոնք փակցվում էին պատերին և Դաշնակցականների գլխին թափված ջղագար լուտանքներից ու կոմունիստական անհամ հոդվածներից զատ ոչինչ չէին պարունակում»[24]: Փաստորեն, հայ բոլշևիկները բռնություն էին գործադրում նաև մամուլի միջոցների վրա, ինչը նույնպես խորացրեց ժողովրդի դժգոհությունը:

Ս. Վրացյանը փետրվարյան ապստամբության պատճառների մեջ լուրջ տեղ է հատկացնում նաև բոլշևիկյան իշխանությունների արտաքին-քաղաքական ձախողումներին: «Բայց միայն ներքին պատճառները չէին, որոնք հայ ժողովրդին ոտքի հանեցին Խորհրդային իշխանության դեմ: Հակառակ իրենց տված հանդիսավոր խոստումների և հանձնառությունների՝ բոլշևիկները ապիկար գտնվեցին և արտաքին քաղաքականության մեջ»[25],– գրում է նա:

Հայաստանի խորհրդային իշխանությունները խոստացել էին Հայաստանը խորհրդայնացնելուց անմիջապես հետո վերականգնել հարաբերությունները արտաքին աշխարհի հետ, Ռուսաստանից բերել «հաց և մանուֆակտուրա», կարգավորել հարևանների հետ տարածքային խնդիրները և Ռուսաստանի օգնությամբ բարիդրացիական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ[26]: Չնայած տված հավաստիացումներին՝ իշխանությունները ձախողեցին հարևանների հետ իրենց քաղաքականությունը:

Անդրադառնալով Ադրբեջանի հետ ունեցած խնդիրներին՝ Վրացյանը գրում է. «Հայ կոմունիստները նույն անկարողությունը ցույց տվին և մյուս հարևանների նկատմամբ: Հայ-ազրբեջանյան սահմանային վեճը չլուծվեց, չնայած, որ Ազրբեջանի հեղկոմը դեռ մայիսին հայտարարել էր, թե ինքը հրաժարվում է Լեռնային Ղարաբաղից հոգուտ Խ. Հայաստանի: Ազրբեջանցիք հետագային հայտնեցին, որ իրենց այդ հայտարարությունը եղել է լոկ խաղ «Դաշնակ»-ների դեմ ու որ իրենք ամենևին նպատակ չունեին Ղարաբաղից ձեռք քաշելու»[27]: Վրացյանը մատնանշում է Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի

---

[23] *Նույն տեղում, էջ 85:*

[24] *Նույն տեղում:*

[25] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, էջ 212:*

[26] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Ինչու և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը.– «Հայրենիք», 1940, փետրվար, էջ 76:*

[27] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1924, մարտ, էջ 119:*

հայտնի հեռագիրը, որով վերջինս հայտարարում էր, «որ այլևս Հայաստանի և Ազրբեջանի միջև ամեն վեճ վերջացած է, և Խորհրդ. Ազրբեջանը եղբայրաբար զիջում է Ղարաբաղը Հայաստանին: Այսուհետև Ղարաբաղը պետք է մտներ Խորհրդային Հայաստանի սահմանների մեջ, և այդ հանգամանքը ջերմ գոհունակությամբ ընդունվեց հայերի կողմից»: Սակայն Ղարաբաղը չհայտնվեց Խորհրդային Հայաստանի կազմում: Վրացյանը այս կապակցությամբ բերում է հայ կոմունիստների այն բացատրությունը, «թե Նարիմանովը Ղարաբաղը զիջելու մտքով չէ, որ արել է հայտարարությունը, այլ, իբրև պրոպագանդ, հայ բոլշևիկների գործը դյուրացնելու նպատակով»[28]:

Այսպիսով՝ հայ բոլշևիկների ձախողված քաղաքականությունը Ադրբեջանի հետ հարաբերություններում դժգոհություններ առաջ բերեցին Հայաստանում: Բոլշևիկների իշխանության գալու նախօրյակին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության կողմից Ղարաբաղից, Նախիջևանից և Զանգեզուրից հրաժարվելու հավաստիացումները գոհունակությամբ ընդունվեց հայ ժողովրդի կողմից: Սակայն, պարզվեց, որ Խորհրդային Ադրբեջանն ամենևին էլ չի ցանկանում հրաժարվել վերոնշյալ տարածքներից: Հայ բոլշևիկներն էլ կամ անկարող էին, կամ էլ չէին ցանկանում լուծել Ադրբեջանի հետ գոյություն ունեցող տարածքային խնդիրները: Ի դեպ, այս անկարողությունը դրսևորվեց նաև Վրաստանի և Թուրքիայի հետ հարաբերություններում:

Վրացյանը խոսում է Վրաստանի հետ ունեցած Խորհրդային Հայաստանի լարված հարաբերությունների մասին: «Ավելի վատ էին հարաբերությունները Վրաստանի հետ: Հայաստանի հեղկոմի բոլոր պահանջներին ու հայհոյանքներին վրաց կառավարությունը պատասխանում էր արհամարհանքով: Վրացիք մերժեցին դատարկել ապօրինի կերպով գրավված Լոռին, կտրեցին Հայաստանի երկաթուղային հաղորդակցությունը Բաթումի և Բաքուի հետ, ձեռք դրին Հայաստանի Թիֆլիսի ներկայացուցչության վրա, և Հայաստանի բոլշևիկ վարիչները անզոր՝ նրանց խոսք հասկցնելու՝ գրգռում էին Վրաստանի դեմ Լոռեցի գյուղացիներին»[29],– գրում է նա: Ելնելով Ս. Վրացյանի այս հաղորդումից՝ պետք է եզրակացնել, որ Վրաստանի իշխանությունները շարունակում էին դեռևս առաջին հանրապետության ժամանակ կիրառվող շանտաժի քաղաքականությունը՝ Հայաստանին սպառնալով պահել շրջափակման մեջ: Լոռու հայ բնակչությունը շարունակ հալածվում էր: Իսկ Խորհրդային Հայաստանի ղեկավարները բավարարվում էին միայն բողոքագրեր ներկայացնելով: Փաստորեն, Հայաստանի

---

[28] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Ինչու և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը.– «Հայրենիք», 1940, փետրվար, էջ 78:*

[29] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1924, մարտ, էջ 119:*

բոլշևիկյան իշխանությունները ի զորու չեղան կարգավորելու նաև Վրաստանի հետ տարածքային խնդիրները:

Հայաստանի ժողովրդի մոտ առավել սուր եղան դժգոհությունները թուրքերի հանդեպ հայ բոլշևիկների թույլ և անօգնական վիճակի պատճառով: «Հայաստանի ժողովուրդը ապշած ու հիասթափված էր նայում բոլշևիկներին»[30],– գրում է Վրացյանը: Այս պայմաններում հայ բոլշևիկները ոչինչ չկարողացան անել: Վրացյանը մատնանշում է վերջիններիս պարզաբանումները հայերի հանդեպ թուրքերի ունեցած թշնամության մասին. «Նրանք (հայ բոլշևիկները – Խ. Ս.) հավատացնում էին ամենքին, թե թուրքերի թշնամությունը դեպի հայերը հետևանք է Դաշնակցականների վերաբերմամբ տածած ատելությամբ. բավական է հայտարարել խորհրդային իշխանություն և եղբայրական ձեռք մեկնել թուրքերին, թուրք-հայկական հարաբերությունները կբարելավվին և թուրք բանակը անմիջապես կհեռանա Ալեքսանդրապոլից ու Կարսից»[31]: Փաստորեն, հայ բոլշևիկները թուրքերի հանդեպ ավելի սթափ ու հաշվարկված քաղաքականություն վարելու փոխարեն, կարծում էին, որ հայության հանդեպ նրանց թշնամական վերաբերմունքի պատճառը ոչ խորհրդային իշխանությունն էր: Խորհրդային իշխանության գալով՝ ժողովուրդն ակնկալում էր առնվազն թուրքերի հեռացումը Կարսից և Ալեքսանդրապոլից: Սակայն թուրքերը ոչ միայն չէին լքում Կարսը և Ալեքսանդրապոլը, այլև դաժան վերաբերմունք էին ցուցաբերում այդ երկրամասերի հայ ազգաբնակչության նկատմամբ: «Եվ ռուսների աչքի առջև, թուրք զորքերը շարունակում էին դաժանորեն ամայացնել Շիրակի հայկական գյուղերը»[32],– գրում է Վրացյանը:

Ամենազավեշտալին այն էր, որ Հայաստանի բոլշևիկ իշխանությունները ճգնում էին թուրքերին ապացուցել, որ իրենք տարբերվում են նախկին իշխանություններից: Իսկ այդ անկարող քաղաքականությունն ավելի էր ոգևորում թուրքերին: Ահա թե ինչ է գրում Ս. Վրացյանն այս առիթով. «Հայաստանի Հեղկոմը «եղբայրական ձեռք» էր մեկնում թուրքերին և կաշվից դուրս էր գալիս ցույց տալու համար, որ ինքը «Դաշնակիցներից» տարբեր է, Թուրքիային բարեկամ իշխանություն է, Երևանից բարեկամական հավաստիացումներ էին ուղարկվում Անգորա – այդ ամենը բնավ չփոխեց թուրքերի հակահայ ընթացքը: Ընդհակառակը, կարծես էլ ավելի գրգռեց նրանց հայերի դեմ, որ նորից բռնել էին ռուսների փեշը՝ շարունակելու համար իրենց ռուսասիրական ավանդական քաղաքականությունը: Երևանից «եղբայրական» ոգիով հե-

---

[30] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, էջ 220:*

[31] *Նույն տեղում:*

[32] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Ինչու և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը.– «Հայրենիք», 1940, փետրվար, էջ 79:*

ռազիրներ էին քաշվում Անգորա, իսկ թուրք կառավարությունը պատասխանում էր, թե ինքը ոչ մի տարբերություն չի տեսնում «Դաշնակների և հայ բոլշևիկների միջև»[33]: Վրացյանը նաև նշում է, որ Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմ Ա. Բեկզադյանի հեռագրերին թուրքերը կարևորություն չէին տալիս[34]: Փաստորեն, հայ բոլշևիկները կուրորեն չէին նկատում թուրքերի թշնամությունը և ակնկալում էին վերջիններիս բարեգթությունը հայերի և Հայաստանի հանդեպ: Երբեմն նվաստացման հասնող նրանց հավաստիացումները թուրքերի հետ «եղբայրական քաղաքականություն» վարելու մտադրության մասին, միայն ավելի էին թուլացնում Հայաստանի դիրքերը:

Այսպիսով՝ փետրվարյան ապստամբության պատճառների մեջ Ս. Վրացյանն առանցքային է համարում նաև Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների վարած անկարող և անարդյունավետ արտաքին քաղաքականությունը: Նրանց չհաջողվեց գոհացնել հայ ժողովրդի սպասելիքները Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի հետ ունեցած տարածքային խնդիրների կարգավորման հարցում:

Փետրվարյան ապստամբությունը պայթեց ոչ միայն վերոնշյալ առարկայական ու ենթակայական պատճառներով, այլև այն հրահրվեց բոլշևիկների կողմից, որոնք ամենուր քաղաքացիական կռվի կոչերով էին հանդես գալիս:

Սիմոն Վրացյանն իր հուշերում գրում է, որ Հայհեղկոմի անդամներ Կասյանը և Ավիսը դեռևս դեկտեմբերի 4-ին իրենց դժգոհությունն են հայտնում Լեգրանին, որովհետև վերջինս համաձայնության է եկել դաշնակցականների հետ, և առանց կռվի է իշխանությունը փոխանցվել բոլշևիկներին[35]: Նա նաև ավելացնում է, որ հատկապես Դրոյին Հայաստանից հեռացնելուց հետո բոլշևիկները ամբողջ թափով սկսեցին «զարգացնել քաղաքացիական կռիվը» և «խորացնել բանվորագյուղացիական հեղափոխությունը»[36]:

Ամփոփելով փետրվարյան ապստամբության պատճառները՝ Վրացյանը հիմնականում այն համարում է բոլշևիկյան իշխանությունների ներքին «հանցավոր» քաղաքականության արդյունք[37]: Մանրամասնելով իր իսկ միտքը՝ նշում է, որ ապստամբությունը չէր բխում միջազգային քաղաքական հանգամանքների նոր դասավորությունից: Ընդհա-

---

[33] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, էջ 222:*

[34] *Նույն տեղում, էջ 231:*

[35] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 67–68:*

[36] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Հուշեր մոտիկ անցյալից.– «Հայրենիք», 1923, նոյեմբեր, էջ 63–73, հունվար, էջ 83:*

[37] *Ս. Վ ր ա գ յ ա ն. Փետրվար 18-ից հետո (մեր հետագա քաղաքականությունը).– «Վէմ» (Փարիզ), 1938, Զ տարի, թիվ 1, էջ 4:*

կառակը՝ տարածաշրջանային կացությունը նպաստավոր էր բոլշևիկների համար. Ադրբեջանը խորհրդայնացել էր, Վրաստանի անկախության անկումը միայն օրերի հարց էր, Ռուսաստանի ներսում քաղաքացիական կռիվներն արդեն հանդարտվել էին, իսկ թուրք-բոլշևիկյան հարաբերությունները բարեկամական էին: «Հեղափոխության քաղաքական պատճառ չկար, և շարժումը տեղի չէր ունենա, եթե բոլշևիկներն իրենք պրովոկացիայի չենթարկեին ժողովրդին»[38],– գրում է Վրացյանը:

Խոսելով փետրվարյան ապստամբության հետևանքների մասին և վերագնահատելով դրանք՝ Ս. Վրացյանն արձանագրում է. «Փետրվարյան ապստամբությունը և հաջորդող համառ կռիվները հաստատեցին մի բան, որ Խորհրդային իշխանությունը Հայաստանում գոյության ոչ մի իրավունք չուներ: Եթե խնդրի լուծումը թողնվեր հայ ժողովրդին, Հեղկոմը այլևս երբեք Հայաստանի երես չէր տեսնի»[39]: Փաստորեն, ժողովրդի ակտիվ մասնակցությունը փետրվարյան ապստամբությանը վկայում էր գոյություն ունեցող դժգոհությունների մասին:

Խոսելով փետրվարյան ապստամբության ժամանակ մղված կռիվների բնույթի մասին՝ Ս. Վրացյանն ասում է. «Կարմիր բանակը, հանուն բանվորագյուղացիական իշխանության, կռվում էր Հայաստանի բանվորների և գյուղացիների դեմ»[40]: Իսկ որպես վկայություն կռիվների անիմաստ լինելուն, Վրացյանը մեջբերում է Հովհաննես Թումանյանին, երբ վերջինս ապստամբության օրերին Երևանից Թիֆլիս՝ Օրջոնոկիձեին հղած հեռագրում նշում է, որ «ռազմաճակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, թե ամբողջ հեղափոխության ընթացքին կարմիր բանակը ավելի անմիտ կռիվ չի վարել»[41]: Վրացյանը դա բացատրում է հայ ժողովրդի՝ ազատության համար անմնացորդ կռվելու պատրաստակամության մղումով: «…Բոլշևիկյան ամբողջ տիրապետության ընթացքին ոչ մի ժողովուրդ այնպես բուռն ու համառ կերպով չի կռվել իր հայրենիքի ազատության համար, որքան հայերը 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին»[42],– գրում է Ս. Վրացյանը:

Վրացյանն անդրադառնում է նաև Կովկասի կոմունիստներին ուղղված Վլադիմիր Լենինի նամակին, որտեղ բոլշևիկների առաջնորդը մեղմ քաղաքականության կոչ էր անում[43]: Այս կապակցությամբ Վրացյանը գրում է. «Այս նամակը որքան և արդյունք էր այն ժամանակվան

---

[38] *Նույն տեղում:*

[39] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, էջ 236–237:*

[40] *Նույն տեղում, էջ 237:*

[41] *Նույն տեղում:*

[42] *Նույն տեղում:*

[43] *Վ. Լ ե ն ի ն. Երկերի լիկատար ժողովածու, հ. 43, Երևան, 1982, էջ 237–240:*

Ռուսաստանի ընդհանուր պայմանների, Անդրկովկասին վերաբերող մասում մեծապես թելադրված էր Հայաստանի փետրվարյան ապստամբության թողած տպավորությունից»[44]: Հենց այս տեսակետից էլ Վրացյանը բարձր է գնահատում փետրվարյան ապստամբությունը՝ նշելով որ այդ շարժման ազդեցությունը փաստացի ավելի մեծ էր, քան Հայաստանի սահմանները[45]: Փետրվարյան ապստամբության շնորհիվ բանտում հայտնված հայ մտավորականությունը և զինվորականությունը փրկվեց արդեն սկսված կացնահարություններից: Մեղմացան ժողովրդի հանդեպ կիրառվող քաղաքական ու տնտեսական հալածանքները: Առարկայական լուծում տրվեց ազգաբնակչությանը հուզող բազմաթիվ խնդիրների:

Այսպիսով՝ «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանը, մեկնաբանելով Հայաստանում 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառները, մատնանշում է, որ դրանք հիմնականում պայմանավորված էին բոլշևիկյան իշխանությունների սխալ քաղաքականությամբ: Հայաստանի բոլշևիկ ղեկավարների գործադրած ձերբակալությունների, բռնագրավումների, հալածանքների քաղաքականությունը, հայկական բանակի և սպայության ոչնչացումը, հարևանների հետ խոստացված խնդիրները լուծելու անկարողությունը ժողովրդին մղեցին զինված ապստամբության: Անդրադառնալով ապստամբության հետևանքներին՝ Վրացյանը կարևոր է համարում այն, որ հայ ժողովուրդը հերթական անգամ ապացուցեց իր իրավունքների համար կռվելու պատրաստակամությունը: Ապստամբության արդյունքում, Ս. Վրացյանի կարծիքով, մեղմացավ բոլշևիկյան ժողովրդահալած քաղաքականությունը Հայաստանում:

ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ ФЕВРАЛЬСКОГО ВОССТАНИЯ 1921 Г. В ОЦЕНКЕ СИМОНА ВРАЦЯЎНА

ХАЧАТУР СТЕПАНЯЎН

Резюме

Председатель «Комитета национального спасения» С. Врацян, комментируя причины февральского восстания 1921 г. в Армении, отмечает, что они в основном связаны с неправильной политикой большевистской власти. Проводимая лидерами большевиков в Армении политика арестов, конфискаций и преследований, уничтожение армянской армии и офицеров, их неспособность решить

[44] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, էջ 243:*
[45] *Նույն տեղում, էջ 244:*

проблемы с соседями, привели народ к вооруженному восстанию. Касаясь последствий восстания, Врацян отмечает тот факт, что армянский народ в очередной раз доказал готовность бороться за свои права. В результате восстания, по мнению С. Врацяна, была смягчена большевистская антинародная политика в Армении.

REASONS AND SEQUENCES OF THE 1921 FEBRUARY REBELLION IN SIMON VRATSYAN'S ESTIMATION

KHACHATUR STEPANYAN

Summary

S. Vratsyan, President of "National Salvation Committee" making some remarks on the reasons of the February rebellion in 1921, points out that they are mainly conditioned by the wrong policy of the Bolshevik authorities. The policy of arrests, confiscations and persecutions by the Armenian Bolshevik authorities, annihilation of Armenian army and officers, their inefficiency to solve problems with the neighbors made the nation rebel. Speaking about the results of the rebellion Vratsyan emphasizes the willingness of the Armenian nation to fight for its rights. In S. Vratsyan's opinion as a result of the rebellion the Bolshevik persecution policy towards nation in Armenia was somehow moderated.